ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

0025, ք. Երևան, Նալբանդյան 130, հեռ. 010-596-125

№ 12/364 «01» 12 2025թ.

Ալեռտո ՍՊԸ (ՀՎՀՀ 02686862)
Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Նաիրի Զարյան 74 Բ
Հեռ.՝ +37498 28-29-38, էլ.հասցե՝ info@alerto.am

ԾԱՆՈՒՑՈՒՄ

Պայմանագիրը միակողմանի ամբողջությամբ լուծելու մասին

ՀՀ ներքին գործերի նախարարության (այսուհետ՝ Գնորդ) և Ալեռտո ՍՊ ընկերության (այսուհետ՝ Վաճառող) միջև 07.01.2025 թվականին կնքված ՀՀ ՆԳՆ ԳՀԱՊՁԲ-2025/Ա-6-1 ծածկագրով թվով 100 հատ «Սեղմված օդի բալոնների» ձեռքբերման գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) շրջանակներում վերոգրյալ ապրանքները պետք է մատակարարվեին մինչև 2025 թվականի օգոստոսի 25-ը, սակայն ապրանքները մատակարարվել են 2025 թվականի հոկտեմբերի 22-ին՝ թերություններով (խախտվել է պայմանագրում նշված տեխնիկական բնութագրի հիմնական պահանջներից մեկը. այն է՝ օդաբալոնների պիտանելիության ժամկետը պետք է լինի ոչ պակաս 20 տարի, սակայն մատակարարված օդաբալոնի վրա մակնանշված է 15 տարի): Այնուհետև, թերությունների շտկման նպատակով՝ 2025 թվականի նոյեմբերի 26-ին Վաճառողի կողմից ներկայացվել է ապրանքի մատակարարման համար պահանջվող փաստաթղթերը՝ 2025 թվականի հոկտեմբերի 22-ի ապրանքի մատակարարման հաշիվ ապրանքագիր, իսկ օդաբալոնները չեն փոխարինվել: Արդյունքում ապրանքը մատակարարվել է տեխնիկական բնութագրին անհամապատասխան:

Ելնելով այն հանգամանքից, որ մատակարարի կողմից փաստաթղթերը ներկայացվել են 2025 թվականի նոյեմբերի 26-ին, ՀՀ ՆԳՆ ԳՀԱՊՁԲ-2025/Ա-6-1 ծածկագրով պայմանագրի շրջանակներում մատակարարումների վերաբերյալ ակտը և պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքների վերաբերյալ եզրակացությունը կազմվել են 2025 թվականի նոյեմբերի 26-ի դրությամբ:

Համաձայն Պայմանագրի 2.1.7 կետի Գնորդը իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը. 2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 15 օրից ավելի:

Ելնելով վերոգրյալից և առաջնորդվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 33-րդ կետի 17-րդ ենթակետը և Պայմանագրի 8.9-րդ կետը՝ ՀՀ ներքին գործերի նախարարությունը միակողմանի ամբողջությամբ լուծում է ՀՀ ներքին գործերի նախարարության և Ալեռտո ՍՊ ընկերության միջև 07.01.2025 թվականին կնքված «ՀՀ ՆԳՆ ԳՀԱՊՁԲ-2025/Ա-6-1» ծածկագրով պայմանագիրը: Պայմանագիրը կհամարվի միակողմանի ամբողջությամբ լուծված սույն ծանուցումը Պատվիրատուի կողմից տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրվանից:

Ալեռտո ՍՊ ընկերությանը տրվում է 5 օրացուցային օր պայմանագրի չկատարած մասով տուժանքով սահմանված գումարներ՝ 10 125 000 /տաս միլիոն հարյուր քսանհինգ հազար / ՀՀ դրամ որակավորման ապահովման և 6 750 000 /վեց միլիոն յոթ հարյուր հիսուն հազար / ՀՀ դրամ պայմանագրի ապահովման ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական վարչության «900008000698» գանձապետական հաշվին՝ Որակավորման ապահովումը, իսկ Պայմանագրի ապահովումը՝ «900008000664» գանձապետական հաշվին փոխանցելու նպատակով, ինչպես նաև Պայմանագրի 6.2 կետով սահմանված տույժը, որը կազմում է 1 101 240 /մեկ միլիոն մեկ հարյուր մեկ հազար երկու հարյուր քառասուն/ ՀՀ դրամ Պայմանագրի 6.3 կետով սահմանված տուգանքը, որը կազմում է 159 600 /հարյուր հիսունինը հազար վեց հարյուր/ ՀՀ դրամ ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական վարչության N900005028106 հաշվեհամարին փոխանցելու նպատակով:

Վճարման կտրոնների բնօրինակներն անհրաժեշտ է ներկայացնել ՀՀ ներքին գործերի նախարարություն՝ ք. Երևան Նալբանդյան 130 հասցեով:

Սահմանված ժամկետում գումարները չվճարելու դեպքում Ալեռտո ՍՊ ընկերությունը «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի

ա. ենթակետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով, ընկերության տվյալները կներկայացվեն լիազոր պետական մարմին, իսկ Մատակարարի կողմից Պայմանագրի շրջանակում ներկայացված տուժանքի մասին համաձայնագրերը՝ պայմանագրի ապահովում և որակավորման ապահովում, սահմանված կարգով, կներկայացվի «Էվոկաբանկ» ՓԲ ընկերություն վերոնշյալ գումարները գանձելու նպատակով:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

Ա. ՖԻԴԱՆՅԱՆ

Գնումների համակարգման բաժին
Կատարող՝ Ա. Սարգսյան
Հեռ.՝ 010-59-61-52